ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2021թվականի N 9

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021թվականի ապրիլի 12-ի N 4 արտահերթ նիստի օրակարգը.

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսային մասում փոփոխություններ կատարելու մասին:
2. Համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 7-ի N 18 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը օտարելու մասին:
4. Համայնքային նշանակության նոր ձևավորվող փողոցներին անվանումներ տալու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2021 թվականի N 10-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ ավագանին որոշում է.

Համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասում՝ հավելված 2-ում, կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցնել 1375000(մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ և աղյուսյակի ոլորտներ սյունյակի 11 01 02 51 տողի պահուստային միջոցներ 4891 սյունյակի <<4381.3>> թվի փոխարեն կարդալ <<3006.3>> թիվը, ընդամենը տողում և սյունյակում <<4381.3>> թվի փոխարեն կարդալ <<3006.3>> թիվը,

2. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցրած 1375000(մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ) դրամը բաշխել հետևյալ կերպ՝ ոլորտներ սյունյակի 01 01 01 51 /կառավարման մարմնի պահպանում ծրագիր/ 4241 հոդվածին/մասնագիտական ծառայություններ/ ավելացնել 530000/ հինգ հարյուր երեսուն հազար / դրամ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի քարտեզագրման, գեոդեզիական չափագրման հաշվառման և հողաշինարարական աշխատանքների ձեռքբերման համար/, 4823 հոդվածին/ պարտադիր վճարումներ/ ավելացնել 845000

/ութ հարյուր քառասունհինգ հազար / դրամ՝ անշարժ գույքի սեփականության վկայականների ձեռք բերման համար, և աղուսյակում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ոլորտներ սյունյակի 01 01 01 51 տողի 4241 սյունյակի <<150.0>> թվի փոխարեն կարդալ <<680.0>> թիվը, 4823 սյունյակի <<11.0>> թվի փոխարեն կարդալ <<856.0>> թիվը :

2) ընդամենը տողում՝<<150.0>> և <<11.0>> թվերի փոխարեն համապատասխանաբար կարդալ <<680.0 >> և <<856.0>> թվերը:

3) ընդամենը սյունյակում՝ <<24735.0>> թվի փոխարեն կարդալ <<26110.0>>թիվը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2021թվականի N 11

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 18 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության, Արարատի մարզի, Դիմիտրով համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին» N 18 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ վերնագրում և տեքստային մասում «տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը» բառակապակցությունում «նախագիծ» բառը փոխարինել « համայնքի գլխավոր հատակագծի նախագծերը(գոտևորման նախագծերը)» բառակապակցությամբ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2021թվականի N 12

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը որ Մարինե Վարազդատի Միերյանին սեփականության իրավունքով պատկանող համաձայն ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հունվարի 29- ի ԱՎԴ/2609/02/18 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը, Դիմիտրով համայնքի Մաշտոցի 22 հասցեի 03-038-0025-0001 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և ըստ հողատեսքի՝գյուղատնտեսական արտադրական օբյեկտների համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառույցը չի գտնվում պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրի նախատեսված գոտիներում, ինչպես նաև որ Մարինե Վարազդատի Միերյանի կողմից օգտագործվող հողամասը նախաեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիների սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, ինչպես նաև 03-038-0023-0001 ծածկագրով հողամասի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման / N 001289 տրված 15.04.1998թ/. վկայականում առկա է այն փաստը շինության սեփականատիրոջը շինության սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ նշված ծածկագրով հողամասը տրված է օգտագործման վարձակալության, հաշվի առնելով այն հանգամանքը որ հողամասի նկատմամբ

սեփականության իրավունքը կփոխանցվի 04.10.2005թ. N 199 –Ն ՀՀ օրենքի 23–րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64 –րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի հողամասրի արժեքի վճարման անդորագիրը ներկայացնելու դեպքում՝ ավագանին որոշում է.

Դիմիտրով համայնքի ղեկավար Արման Իոնանովին թույլատրել՝ Մարինե Վարազդատի Միերյանին սեփականության ռավունքով՝ գնման նախապատվության իրավունքով, ողղակի վաճառքի միջոցով օտարել Դիմիտրով համայնքի Մաշտոցի 22 հասցեի 03-038-0023-0001 արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 1.06687 հեկտար հողամասը գործող կադաստրային արժեքով՝ համաձայն, 2019 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անշարժ գույքի կադաստրային՝ /մոտարկված շուկայական հավասար/ արժեքով՝2 մլն 003 հազ. 262 դրամով / երկու միլիոն երեք հազար երկու հարյուր վաթսուներկու դրամ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՄԱՐՔ ԴԻՄԻՏՐՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
04200683

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2021 թվականի N 13

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Դիմիտրով համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության, Արարատի մարզի, Դիմիտրով համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, համայնքի գլխավոր հատակագծի նախագծերը(գոտևորման նախագծերը) հաստատելու մասին» N 18 որոշումը՝ ավագանին որոշում է.

1.Դիմիտրով համայնքի տարածքի բնակավայրի ընդհանուր 03-038-0239-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքի 1-ին շարքի տաս կտոր բնակելի կառուցապատման հողամասերը Գ. Նժդեհի փողոցին միացնող փողոցը անվանել Աշուրբանապալի փողոց:

2.Դիմիտրով համայնքի տարածքի բնակավայրի ընդհանուր 03-038-0239-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքը համայնքի 03-038-0238-0002 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողատարածքից առանձնացնող փողոցը անվանել Կոնստանտին Ալավերդովի փողոց:

3. Նոր ստեղծված Աշուրբանապալի փողոցը՝ Կոնստանտին Ալավերդովի փողոցին միացնող փողոցը անվանել Պավել Էյվազովի փողոց:

Կողմ -6

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ Դեմ -0 Ձեռնպահ -0

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ